

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ ԲՆՆՈՒԹՅԱՆ ԾՈՒՌՁԸ

Ռ. ՍԱՐԻՆՅԱՆ

XIX դարի վերջի հայ հասարակական մտքի հետազոտողները բազմիցս անդրադարձել են տնտեսագիտության պատմության հարցերի լուսաբանությանը: Լույս էին տեսնում աշխատություններ, որոնք հայ իրականությանը հաղորդակից էին դարձնում համաշխարհային գիտական մտքի առաջընթացին: Այդ աշխատություններում տնտեսական ու սոցիալական կյանքի հետ առնչվող առանձին երևույթների քննությունը որոշակի գիտական արժեք ունի ոչ միայն հայ տնտեսագիտական մտքի պատմության տեսակետից, այլև արդիականության հետ իր առնչություններով: Այսպես, հայտնի տնտեսագետ Ա. Արասխանյանը հատուկ նշանակություն էր տալիս ազգաբնակչության աճի պրոբլեմի քննությանը: Ըստ նրա, ամեն մի ազգի տնտեսական, բարոյական և քաղաքական կյանքի վրա ոչինչ այնպիսի ազդեցություն չունի, ինչպես ազգաբնակչության աճն ու խտությունը: Հասարակական կյանքի բազմաթիվ հարցեր ուղղակի առնչվում են այդ պրոբլեմի հետ, ինչպես հողատիրության, բնակչությանը անհրաժեշտ գոյամիջոցներով ապահովելու խնդիրը և այլն:

Արասխանյանը մարդկային բոլոր պահանջները բաժանում է երկու խմբի՝ ֆիզիոլոգիական և քաղաքակրթական: Նա հարցը դիտում է պատմականորեն, նշելով, որ այդ պահանջների մակարդակը փոփոխվում է հասարակության պատմական դարգացման հետ, սովյալ երկրի տրեստեսական կյանքի առաջընթացի տարբեր աստիճաններին համապատասխան: «Ֆիզիոլոգիական կարիքներ,— գրում է նա,— դոքա կենդանությունը շարունակելու ցանկությունից բխած կարիքներն են և քաղաքակրթական, որոնք արժարժողը ոչ թե բնությունն է, այլ այն աստիճանը, որի վրա կանգնած է մարդս դարգացման և առաջդիմության ընթացքում: Եվ որքան մի ընդհանրություն, մի ազգություն առաջացած է, նույնքան նորա անդամները կազմող անհատների քաղաքակրթական կարիքները ավելի բազմաթիվ են, քան բուն բնական կամ ֆիզիոլոգիական կարիքները»¹: Սակայն այս կամ այն խավի պահանջների շրջանակները պայմանավորված են նաև նրանցից յուրաքանչյուրի հասարակական դիրքով և աշխատանքի բնույթով: Բացի այն պահանջներից, որոնք ընդհանուր են բոլորի համար, Արասխանյանը տարբերակում է նաև դասակարգային պահանջներ: Հասարակական կյանքի զարգացումը զուգակցվում է աշխատանքի հասարակական բաժանման հետագա խորացումով, որը հանգեցնում է նրան, որ հասարակական «տնտեսական համայնքի» անդամները սկսում են զբաղվել տարբեր գործունեությամբ, բաժանվելով սոցիալական խմբերի, դասերի: Հենց սրանով էլ պայմանավորված է այն հանգամանքը, որ բացի ընդհանուր պահանջմունքներից, անհատների աշխատանքի բնույթին, հասարակական դիրքին ու քաղաքական ուժին համապատասխան ձևավորվում է «կենցաղավարության» որոշակի եղանակ՝ պահանջմունքների որոշակի տեսակներով ու քանակով:

Արասխանյանը հատկապես կարևոր է համարում բնակչությանը անհրաժեշտ գոյամիջոցներով ապահովելու պրոբլեմը: «Բայց արդյոք բնությունը ինքը,— գրում է Արասխանյանը,— սահմաններ չի՞ դնում արդյունաբերության և մասնավորապես ապրուստի միջոցների աճման: Այս հարցը թեորիական տեսակետից մեծ կարևորություն ունե, որովհետև եթե ապրուստի միջոցների աճեցնելը միայն մարդու ջանքից կախված լիներ, այդ ջանքը գործադրած հասարա-

¹ Ա. Արասխանյան, Ազգաբնակչությունը և ազգաբնակչական շարժումները, Թիֆլիս, 1883, էջ 15:

կուլթյունը անզգարնակչության որևէ աստիճանի աճելուց բնավ չպիտի քաշվեր, չպիտի նեղանար, չպիտի վախենար: Արդ, արդյոք այդ այդպե՞ս է, արդո՞ք ազգաբնակչության աճումը թշնամի շունի նույնիսկ բնության մեջ: Մեր դրած հարցը կրում է քաղաքատնտեսության մեջ Մալթուսի թեորիա անունը²:

Մալթուսի տեսությունը, Արասխանյանի կարծիքով, պայմանավորված է գոյամիջոցների արտադրության ու ազգաբնակչության աճի միջև գոյություն ունեցող հակադրությամբ: Տ. Էնգելսը քննադատելով Մալթուսին՝ այս առթիվ նկատում է. «Բազմեներն ու մարդիկ հավ են ուտում, սակայն այնտեղ, որտեղ բազմեները շատ են՝ հավ քիչ կա, իսկ այնտեղ, որտեղ մարդիկ են շատ, հավերն էլ են շատ»:

Մարքսիզմի կլասիկները ժամանակին տվել են Մալթուսի տեսության հիմնավոր քննադատությունը, իսկ նրան բնութագրել որպես «տիրապետող դասակարգերի անպատկառ սիկոֆանտ»³, որի ուսմունքում դրսևորվում է «տնտեսագետի անբարոյականությունն իր կատարյալ ձևով», որը, Չերնիշևսկու խոսքերով, «գիտի ինչու և ինչի համար է դատարկաբանում»⁴:

Ինչո՞վ բացատրել ազգաբնակչությանը վերաբերվող հարցերում Արասխանյանի թույլ տրված որոշ ծայրահեղ ըմբռնումների առկայությունը: Հայտնի է, որ Արասխանյանը որոշ տուրք է տվել հողի նվազող պտղաբերության օրենքին: Իսկ սա, թերևս, այն հիմնավոր փաստարկն է, որ միշտ էլ օգտագործվել է ազգաբնակչության վերաբերյալ այդ տեսության «ճշմարտացիությունը» հաստատելու համար: Իբր զնալով նվազում են հողի արտադրական կարողությունները, իսկ բնակչության հետագա ավելացման պայմաններում գերբնակչության վտանգը դառնում է անխուսափելի: Արասխանյանը հասարակությանը զարգացման հարցերում հարում էր սոցիալ-դարվիինիզմի տեսությունը: Այս ուղղության ներկայացուցիչները այս կամ այն չափով տարածելով հասարակության վրա օրգանական աշխարհի զարգացման կենսաբանական օրենքները, մասնավորապես Դարվինի հայտնագործած բնական ընտրության և գոյության կովի օրենքները, պնդում էին, թե նոր օրգանիզմների առաջացման համար նախադրյալներ ավելի շատ կան, քան կյանքի պահպանության հնարավոր միջոցներն են: Այստեղից էլ՝ երկյուղը գերբնակչության հանդեպ:

Եվ պատահական չէ, որ անդրադառնալով սոցիալ-դարվինիստների «գոյության կովի» օրենքի տեսությանը, Արասխանյանը փորձում է տարբերակել այդ օրենքի դրսևորումը կենդանական աշխարհում և մարդկային հասարակության մեջ, առաջադրելով «գոյության կովի» օրենքի անխուսափելիությունը քաղաքակրթական ձևի մեջ դնելու ինչ-որ վերացական սկզբունք: «Մենք չենք կարող վերացնել գոյության համար կովի օրենքը,— գրում է նա,— բայց մենք կարող ենք այդ կովի վրա հասարակական կյանքում բարձր պատվանդանների վրա դնել և այդ պատվանդանների բարձրությունները պատմական այլ և այլ շրջաններում ցույց կտան, թե որ շրջանն ավելի քաղաքակիրթն է եղել»⁵:

Տ. Էնգելսն իր նամակներից մեկում խոսելով սոցիալ-դարվինիզմի և մալթուսականության միջև գոյություն ունեցող կապի մասին՝ գրում է. «Գոյության կովի դարվինյան ամբողջ ուսմունքը պարզապես Հորսի... ուսմունքի և կոնկրետնեցիայի բուրժուական տնտեսական ուսմունքի, ինչպես և Մալթուսի ազգաբնակչության թեորիայի փոխադրումն է հասարակությունից կենդանի բնության բնագավառը:

Կատարելով այդ ֆոկուսը, կրկին այդ նույն թեորիաները օրգանական բնությունից փոխադրում են պատմության մեջ և ապա պնդում, թե իբր ապացուցված է, որ դրանք մարդկային հասարակության հավիտենական օրենքների ուժ ունեն: Այդ պրոցեդուրայի նախվորությունը աշխի է դարձնում, դրա վրա շարժե բառեր վատնելը»⁶:

Արասխանյանը հաճախ բնակչության հնարավոր աճը մի կողմից կապում էր նյութական բարիքների արտադրության հետ, մյուս կողմից, ինչպես Սիստոնգին, եկամտունքի հետ, որն իբր կարգավորում է բնակչության բնական վերարտադրությունը: Հենց այս իմաստով է նա գրում, որ որոշակի կապ գոյություն ունի «անհատական միջին կարիքների չափսի, երկրի արդյունաբերության մեծության և ազգաբնակիչների թվի մեջ: Կարիքների չափսը ոչ թե միայն ազդում է բնակիչների թվի վրա, այլ ազդում է ազգաբնակչության աճման վրա»⁷: Արասխանյան-

² Նույն տեղում, էջ 22:

³ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26 ч. II, М., 1963, с. 126.

⁴ Н. Чернышевский, Полн. собр. соч., т. XIII, М., 1949, с. 654.

⁵ «Մուրճ», 1895, № 6, էջ 805:

⁶ Կ. Մարքս, Տ. Էնգելս, Նամակներ «Կապիտալի» մասին, Երևան, 1954, էջ 245:

⁷ Ա. Արասխանյան, Նշվ. աշխ., էջ 19:

յանն, իհարկե, տեսնում էր գերբնակչությունը կապիտալիզմի պայմաններում, բայց, ինչպես և Սիստոնդին, չկարողացավ ընկալել ազգաբնակչության կապիտալիստական օրենքի էությունը, իսկ նման բացատրությունը, ոչինչ չի կարող տալ «գերբնակչության» թեորիական անալիզի համար»⁸

Սակայն պետք է նկատել, որ շնայած Մալթուսի հանդեպ տնտեսագետի «ներքողներին», Արասխանյանն անվերապահորեն չի ընդունել ազգաբնակչության այդ հակագիտական տեսությունը, ինչպես ենթադրում է Ա. Օհանյանը⁹։ Մեր կարծիքով, այս հարցում ավելի ճիշտ տեսակետի վրա են կանգնած Ա. Զուրարյանն ու Խ. Գուլանյանը, որոնք նշելով Արասխանյանի տուրքը Մալթուսի ազգաբնակչության տեսությանը, միաժամանակ տվել են այդ տեսության՝ նրա քննադատությունը¹⁰։

Արասխանյանը քննադատում է Մալթուսի այն պնդումը, թե գոյամիջոցներով չապահովված մարդը ավելորդ է երկրի վրա. եթե ըստ Մալթուսի պետք է կրճատել ամուսնություններն ու ծննդաբերությունները, դրանով իսկ կրճատվով բնակչության աճը, ապա Արասխանյանն ընդհակառակը, իր աշխատության հենց սկզբում նկատում է. «Նոր և բազմաթիվ ծնունդներից պատճառած ազգաբնակչության վերը բացատրած չափից դուրս աճելու դեմ միակ միջոցը պակնների հաճախման նվազեցնելը չէր միայն, հասարակությունը նույն նպատակին հասնելու համար դիմում էր մի այլ մեծ միջոցի և այդ միջոցը՝ երկրի հարստության օրբստօրե և տարեցտարե աճեցնելը բարձրացնելն է, որով և ապահովացնում է նոր աշխարհ եկածների կյանքը։ Ահա թե ինչու ոչ թե միայն արդյունաբերելը, այլև արդյունաբերության աստիճանապես աճեցնելը մարդկային առաջադիմության համար մի անհրաժեշտություն է, և նույնքան ուժեղ անհրաժեշտություն, որպես այս կամ այն բնական օրենքները»¹¹։ Ինչպես տեսնում ենք, տրեստեսագետը արտադրության զարգացման միջոցով՝ աճող ազգաբնակչության պահանջների բավարարումն ավելի խոշոր գործոն է համարում, քան մարդկության աճի բնական օրենքը։ Ա. Արասխանյանը չի համաձայնվում նաև Մալթուսի այն պնդման հետ, որ իսկապես գոյամիջոցները աճում են թվաբանական պրոգրեսիայով, իսկ մարդկությունը՝ երկրաչափական, որ «Մալթուսը հակառակ գիտական ոգու, որը խորապես պահանջում է ապացույցներ ասածը՝ հաստատելու համար, իր թեորեն ուզեց մաթեմատիկական ֆորմուլի ձև տալ, բայց սխալվեց»¹²։

Ստացվում է, որ Մալթուսի ուսմունքը գիտականորեն անխոցելի չէ, որ նա, ինչպես նկատում է տնտեսագետը, մի այլ առիթով, «միայն պնդում է, առանց հաստատելու, իբր ապրուստի միջոցները արհիֆմետիկական պրոգրեսիայով են բազմանում։ Ինչո՞ւ բույսերը չեն կարող նույն գեոմետրիական պրոգրեսիայով աճել, որպես մարդկային ցեղը»¹³։ Նա բերում է տրվյալներ ցույց տալու համար, որ մարդկությունը երկրաչափական պրոգրեսիայով չի աճում։ Կան գործոններ, որոնք հակառակ ազդեցություն են թողնում աճման այդ ընթացքի վրա։

Արասխանյանը նկատում է, որ սերտ կապ գոյություն ունի արտադրության աճի և ազգաբնակչության աճի միջև, որ ազգաբնակչության աճը վտանգավոր է այն ժամանակ, երբ դրա համեմատ չի ավելանում երկրի հարստությունը, որն, ինքնին, «հետադիմության նշան է»։ Արասխանյանը վկայակոչում է Չիկաստանը. մի ժամանակվա այդ քաղաքակրթված երկիրը տրեստեսական զարգացման իր աստիճանով քիչ է առաջադիմում, մինչդեռ ազգաբնակչության աճն ավելանում է մեծ արագությամբ։ Այստեղից էլ՝ կենսամակարդակի ցածրությունն՝ այդ երկրում։ Այս իմաստով էլ նա շեշտում է տնտեսական առաջադիմության անհրաժեշտությունը, որը պետք է ծառայի որոշակի քաղաքակրթական նպատակի, ու մերժելով պասսիվ գոյության սկզբունքը՝ պահանջում ակտիվ գործակցություն քաղաքակրթության առաջընթացին, որ «բավական չէ գոյություն ունենալ, այլ պետք է գոյություն ունենալ առաջադիմության մեջ»¹⁴, որ «տնտեսական առաջադիմությունը ոչ թե միայն ցանկալի պիտի համարվի, այլև ամենակարևոր անհրաժեշտություն մի հասարակության, մի ազգի, մի պետության նույնիսկ գոյության համար, եթե

⁸ Վ. Ի. Լեևին, Երկիր, հ. 2, 1950, էջ 224։

⁹ Ա. Օհանյան, Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից, Երևան, 1960, էջ 106։

¹⁰ ՏՀ՝ Խ. Գուլանյան, Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1959, էջ 550, Ա. Զուրարյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959, էջ 429։

¹¹ Ա. Արասխանյան, Նշվ. աշխ., էջ 21։

¹² Նույն տեղում, էջ 31։

¹³ Նույն տեղում, էջ 26։

¹⁴ Նույն տեղում, էջ 1։

այդ գոյությունը մի որևիցե քաղաքակրթական նպատակի պիտի ծառայե»¹⁵, Հենց այս իմաստով էլ նա, կասկածի տակ առնելով ազգաբնակչության բացարձակ աճի Մալթուսի ընտրած մեթոդը, համապատասխան սովյալներով ցույց է տալիս, որ եվրոպական զարգացած երկրներում, շնչալած բնակչության քանակական աճին, այն հարաբերականորեն նվազում է:

Ինչպես հայտնի է, Ռիկարդոն ճիշտ նկատեց, որ գյուղատնտեսական մթերքների գների բարձրացման հետևանքով ունտան աճի տեղեկնց ունի: Սակայն նա չկարողացավ հասնել հարցի գիտական վերլուծության և գյուղատնտեսական մթերքների գների բարձրացումը հանգեցրեց հողի նվազող պտղաբերության օրենքին, միաժամանակ տուրք տալով Մալթուսի տեսությանը: Արասխանյանն այս հարցում որոշ իմաստով հետևել է Ռիկարդոյին: Խոսելով վատորակ հողերի մշակության անհրաժեշտության մասին, Արասխանյանը նկատում է. «Դորա պատճառն այն է, որ հողի արտադրական ուժը մի սահման ունի, որից դեն, կրկնապատկելով Ձեր ջանքը և կապիտալը, հողը ձեռք երկու անգամ ավելի արդյունք չի տա. մինչև որ նույնիսկ մշակության ամբողջ սխտեմը չփոխեք: Որոշել այդ սահմանը անկարելի է, բայց թե նա կա, նա գոյություն ունի՝ այդ բոլորովին անկասկածելի է»¹⁶: Ճիշտ չէ նշվածից եզրակացնել, թե Արասխանյանի համար «հողի պտղաբերության նվազման «օրենքը» մնում է լիակատար ուժի մեջ» և իբրև փաստարկ ծառայեցնել այն բանի համար, որ նա անվերապահորեն ընդունել է նաև Մալթուսի տեսությունը¹⁷:

Ընդհակառակը, ակնհայտ է, որ տնտեսագետն այստեղ քննադատում է հողի նվազող պտղաբերության «օրենքը» տեսությունը: Իրոք, եթե տեխնիկայի զարգացման աստիճանն ու հողի մշակության եղանակները ընդունենք հաստատուն ու մեկընդմիջտ սրված, ապա լրացուցիչ կապիտալ ներդրումներով գյուղատնտեսական մթերքների անընդհատ ավելացումը անհնար կլինի: Այս առումով էլ Արասխանյանն ընդգծում է, որ դրա համար պետք է փոխվի «մշակության ամբողջ սխտեմը»: Ստացվում է, որ «հողի արտադրական ուժի սահմանը» անկախ է միայն մշակության ամբողջ սխտեմի անփոփոխության պայմաններում: Եթե Մալթուսը հողի նվազող պտղաբերության «օրենքը» ընդունելի էր համարում նրա բացարձակ իմաստով, ապա Արասխանյանը որոշ վերապահություններով հակված էր այն մտքին, որ քաղաքակրթության ուժը «ամենաընդարձակ մտքով» հնարավորություն կտա «երկրագործական արդյունաբերությունը ավելի մեծացնել, քան նույն ժամանակամիջոցում ազգաբնակչությունն աճել կարող է»¹⁸:

Էական է դիտել մի հանգամանք ևս. եթե Մալթուսը իր տեսությունը հանգեցնելով հոռետեսության, արդարացնում էր համաճարակներն ու պատերազմները, Արասխանյանն, ընդհակառակը, այդ երևույթները դիտում է որպես բնակչության նորմալ աճը խոչընդոտող գործոններ ու գոհունակությամբ նկատում, որ առաջագիծ երկրներում բժշկության զարգացմամբ համաճարակների հետևանքով մահացությունը կրճատվել է:

Տարօրինակ է, որ նման վերապահումներով հանդերձ, որը ըստ էության Մալթուսի տեսության «հերքումն է», ինքը՝ Արասխանյանը նկատում է, որ այն «մի ճշմարիտ ազգաբնակչության թեորիա լինելու համար, ըստ իս, մի բան է պակաս, այն է՝ լիակատարությունը: Նա կարտություն ունի լրացման»¹⁹:

Ազգաբնակչության հարցը հետազայում ևս զբաղեցրել է Արասխանյանին. դրա քննությանը նա անդրադարձել է առանձին հոդվածներում: Նրա տնտեսագիտական հայացքները հետազոտողներից ոչ ոք չի զբաղվել այդ հոդվածների վերլուծությամբ, հոդվածներ, որոնցում Արասխանյանը որոշակիացնում է ազգաբնակչության հարցերի վերաբերյալ իր ըմբռնումները: Հատկապես ուշադրության արժանի է «Թիվ և ուժ» բնորոշ վերնագիրը կրող հոդվածը: Այստեղ տնտեսագետը մեծ նշանակություն է տալիս ազգաբնակչության թվին, այն դրույթին, թե «հավասար պայմաններում» ազգերի մեջ առաջնությունը պատկանում է նրան, «ով թվով ավելի մեծ է»: Արասխանյանը, որը հանդես էր գալիս մերկանտիլիստների տնտեսական սխտեմի քննադատությամբ, ազգաբնակչության խտության հարցում կարծես համամիտ էր նրանց հետ, գտնելով, որ «աղբի ուժը» նրա թվի մեջ է: «Մեծ քանակությամբ մի տեղ զարսած սառույցները, — գրում է նա, — դիմանում են նաև տաք օրերին, մինչդեռ մի փոքրիկ կտորը ձեռաց հալ-

¹⁵ Նույն տեղում, էջ 38:

¹⁶ Ա. Արասխանյան, Հողի արդյունաբերությունը և հասարակությունը, Թիֆլիս, 1884, էջ 41:

¹⁷ Ա. Օհանյան, Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից, Երևան, 1960, էջ 98—101:

¹⁸ Ա. Արասխանյան, Հողի արդյունաբերությունը..., էջ 48:

¹⁹ Ա. Արասխանյան, Ազգաբնակչությունը..., էջ 35:

չում է, որովհետև նրանք իրանց շուրջը մի սառցային մթնոլորտ են ստեղծում, որի մեջ կարող է դիմանալ սառույցը: Որպեսզի ծառերը կարողանան ստեղծել անտառի մթնոլորտ, պահանջում է նորա որոշ քանակությունից պակաս շլիների: Մի քանի ծառը անզոր է մթնոլորտ ստեղծելու...»²⁰, նա գտնում է, որ այդ նույնը կարելի է ասել նաև ազգերի վերաբերյալ, որ «ներքին կյանք ստեղծելու, պահպանելու և զարգացնելու» համար մեծ թվով բնակչություն ունենալը լավ է: Տնտեսագետը պայքարում է այն բանի համար, որպեսզի հասարակական գիտակցության մեջ մարմնավորվի «ազգաբնակչության աճի բարձր գաղափարը»: «Մարդկային շունչը ինքնըստինքյան արտադրող, սպառող և դրող ուժ է,— գրում է Արասխանյանը,— որքան շատ արտադրում է, որքան շատ սպառում է, նույնքան ավելի մեծ դրող ուժ է ներկայանում նա հասարակական տեսակետից, որովհետև տնտեսական կյանքի պրոցեսը ազդում է նաև հասարակության մտավոր և հոգեկան շարժումների վրա:

Ոչ միայն պետք է բարվոքել եղածների դրությունը, այլև դրականապես ավելացնել հասարակություն կազմող անդամների թիվը: Մենք, որ մեծ կշիռ ենք տալիս ազգաբնակչության աճելուն և բազմանալուն և հանդես ենք գալիս նորա բարձր հասարակական նշանակությունը ցույց տալու, ի նկատի ունենք այն, որ ազգաբնակչության այդ ցանկալի աճումը գլխավորապես մեզանից է կախված»²¹:

Բոլոր պարագաներում տնտեսագետը փորձում է գտնել կնճռոտ հարցի լուծման պատասխանը, և նրա հայացքները ելք են որոնում դեպի պատմական օպտիմիզմը:

Р. Н. САРИНЯН—Об одном анализе теории народонаселения.—Исследователи армянского общественного развития XIX-го века многократно обращались к освещению вопросов истории экономических теорий, оценивали их научное и историческое значение. В статье дается критический анализ ряда положений, выдвинутых А. Арасханяном по некоторым вопросам теории народонаселения. А. Арасханян придавал большое значение рассмотрению проблем народонаселения, усматривая в этом важный фактор для разрешения многих экономических и социальных явлений общественной жизни. Выступая за «высокую идею роста населения», он отрицает принцип пассивного существования и требует активного участия в поступательном движении цивилизации. В статье раскрываются также взгляды А. Арасханяна на концепцию убывающего плодородия почвы, на теорию Сисмонди о соотношении естественного воспроизводства населения и доходов на учение социал-дарвинизма.

²⁰ «Մուրճ», 1890, № 2, էջ 638:

²¹ Նույն տեղում, էջ 642: